

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆԹ-ԲԵՄԱԿԱՆԹ

Շր. 10 Յունիս.- Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնամատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէթեան:

- Հոգեգալստեան մախատմակին ի Ս. Յակոբ մախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

- Գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Նկեսեցէ»ի եւ Հսկման կարգերուն մախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Կիր 11 Յունիս.- Հոգեգալուստ (Բարեկենդամ Նդիական Պահոց):

Առաւօտեան ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան» հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Օրումն հանդիսաւոր Ս. Պատարազը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց եւ բարեգեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Սպասարկութեան էին Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան եւ Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէթեան:

- Կեսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք.ի գլխաւորութեամբ Միաբան հայեր մեկնեցան Սիմոն Ենո, մախ այցելեցին վերջին ընթրեաց վերնատունը - օրումն ղեպփին պատմական վայրը - կատարուեցաւ ժամերգութիւն, ապա Ս. Փրկչի գաւթին մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, համգուցեալ Ս. Պատրիարքաց, լուսարարապետաց եւ միաբանից հոգեհանգստեան ի հանգիստ:

Շր. 17 Յունիս.- Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղորդ. ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբեն Վրդ. Յովակիմեան:

Կիր. 18 Յունիս.- Սկիզբն Յարութեան Սիրակեցի եւ յիշատակ Նդիայի մարգարէին: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ. հաղիսապետն էր Գերշ. Տ. Յուսիկ Նպս. Պաղտատեան. ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալմանեան:

- Նախատմակին ի Ս. Հրեշտակապետաց մախագահեց Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեան:

Բշ. 19 Յունիս.- Սուրբ Կուսմանցն Հոփսիսիւնեանց:

Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, իսկ Ս. Պատարազը

մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան Ս. Հռիփսիմէի մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Ուր. 23 Յունիս.- Նախատմակին ի Ս. Յակոբ մախագահեց Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեան:

Շր. 24 Յունիս.- Ս. Գրիգորի Լուսարոյնին (Սյն ի վիրապէն): Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսարոյնի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աւետիս Արք. Իփրանեան:

- Նախատմակին ի Ս. Յակոբ մախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Ապա ծնրաղիի «Տէր Ռդարմեա» Խրգուեցաւ ըստ սովորութեան:

Ամենապատիւ պատրիարք Հօր ճոռամբ, երեք Սարկաւագներ (Արմէն Սրկ. Աթաբանեան, Գեորգ Սրկ. Պապախանեան, եւ Նորայր Սրկ. Զաքարեան) ստացան բաժանայական կոյտմ: Ընծայեալները ծնրագնաց յառաջացան մինչեւ դարս, ըստ արարողութեան աւարտին արտասանեցին միւր եկեղեցւոյ ուղղափառ դասաւորութեան հանգանակը:

Պաշտակալեան էր Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան, առընթերականներն էին Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէթեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Կիր. 25 Յունիս.- Օրումն Սուրբ Պատարազը մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Արք. Պուրնէժեան:

Ի ժամ Պատարագին կատարուեցաւ երեք Սարկաւագներուն կուսակրօմ բաժանայի ճոռաւորութիւնը:

Ընծայեալները, ի մշան աշխարհի հրաժարման, ճոռեքը վեր բարձած ժողովուրդին դառնալէ ետք, ճոռաւորութեան երկրորդ բաժնին մէջ ընդունեցին բաժանայական գգեսաւորման օրինութիւնը, տըւութեան ուրոյն աղօթքներով:

Օծման խորհրդատու ու մուխրակաւ պահում, Զննադրչի Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը Արմէն Սրկ. Աթաբանեանին անուանեց «Հայր Էմանուէլ»: Գեորգ Սրկ. Պապախանեանին «Հայր Ընծառուէլ», իսկ Նորայր Սրկ. Զաքարեանին «Հայր Թողորդեան»: Ընծայեալները ստանալէ ետք իշխանութիւն՝ մատուցանելու Սուրբ Պատարագ, իրենց անդամին օրինութիւնը տուին ժողովուրդին:

Պատրիարք Արքազան Հայրը խօսեցաւ բովանդակային բարոյ մը: «Ընդունի՛ր պահուն բովանդակ Միաբանութիւնը քեւ բարձրամակով ողբագոչութեամբ, համբուրելով անոնց նորածնակատն ու աղը: Նոյնը ըրին դպիրներն եւ ժողովուրդը Պատարագք աւարտին, եկեղեցիին դասին մէջ: «Հայրապետական Մաղթամէի» արարողութեան նախագահեց Պատրիարք Արքազան Հայրը:

— Կէսօրէ ետք տեղի ունեցաւ «Անդաստան»ի արարողութիւն. Հանդիսապետն էր Լուսարարապետ Գեորգ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Այս տեղի ունեցաւ վեղարի Տըւլութիւնը ժամերգութեան աւարտին: Նորընթաներ իրենց առանձնացման բառասունքի համար Ս. Փրկիչ Վանք փոխադրուեցան:

Եր. 1 Յուլիս.— Մեծին Ներսիսի եւ Խաղայ Եղիշեկացոյնի: Ս Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր. ժամարարն էր Տէր Դանիէլ Քահանայ Գարանեան:

Կիր. 2 Յուլիս.— Բարեկենդան Ս. Լուսաւորչի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ: Հանդիսապետն էր Գեորգ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Ժամարարն էր Տէր Զաքարիա Քահանայ Սարիբեկեան:

Ուր. 7 Յուլիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեորգ. Տ. Սեւան Եպս. Դարիպեան:

Եր. 8 Յուլիս.— Ս. Գրիգորի Լուսաւորչին (Գիւտ Նշխարաց): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 9 Յուլիս.— Երեկոյան Սուրբ Գրիգոր լուսաւորչի տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Երուսաղէմի Հրեական բաժնին մէջ գտնուող եւ այդ մեծ տուրքին անունը կրող եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Զոքանեան, որ նաեւ բարոցեց:

Դշ. 12 Յուլիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեորգ. Տ. Սեւան Եպս. Դարիպեան:

Եշ. 13 Յուլիս.— Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ (Տօն Ազգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ բարոցեց Հոգշ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Մոյսեան:

Եր. 15 Յուլիս.— Ս. Տրդատայ քաջաւորին մերոյ եւ Աշխեն տիկնոցն եւ Խաղովիդիտոյն: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սահակ Արք. Մաշապեան: — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեորգ. Տ. Սեւան Դարիպեան:

Կիր. 16 Յուլիս.— Գիւտ Տփոյ Ս. Աստուա-

ծածնի: Սուրբ Պատարագը մատուցուեցաւ Գեքսեմնիի Սուրբ Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Սուրբ Գեքեմնիին վրայ: Երջուդարձի թափօրներուն գլխաւորեց Գեորգ. Տ. Սեւան Եպս. Դարիպեան: Ժամարարն էր Տէր Եղրաս Քահանայ Պոկտան:

Ուր. 21 Յուլիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեորգ. Տ. Սեւան Եպս. Դարիպեան:

Եր. 22 Յուլիս.— Երկուտասան առաքելոցն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պողոսի վերնամատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Համարսեմ Վրդ. Քէշիշեան:

Կիր. 23 Յուլիս.— Բարեկենդան Վարդապաւ-
ռի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատարան մէջ: Հանդիսապետն էր Գեորգ. Տ. Կիրեղ Եպս. Գաբիկեան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Արք. Պուրնէքեան:

Եշ. 27 Յուլիս.— Անցնալ տարի Աշխնունով գոհուած ժառանգաւոր Արշակ Մարկոսեանի տարեկիցին առթիւ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, յետ երեկոյեան ժամերգութեան տեղի ունեցաւ ինքնակազմութեան պաշտօն նախագահութեամբ Ամենապատիւ Պատրիարք Արքազան Հօր:

Կարադուրօսինէ վերջ, ժառ. Վարժարանի փոքր սրահին մէջ տեղի ունեցաւ խաչարի Օրհնութիւն, եւ աշակերտներու կողմէ արտասանութեամբ, շարադրութեամբ եւ երգով յայտագրի մը:

Ուր. 28 Յուլիս.— Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից Ս. Էջմիածին մատարան մէջ: Հանդիսապետն էր Գեորգ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան:

Եր. 29 Յուլիս.— Յիշատակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Մերայէքեան:

— Մայր Տաճարին մէջ պաշտուած Այլակերպութեան մեծահանդէս նախատօնակին եւ Տեառնեղբայր Յակոբոս Առաքելի յիշատակի հանդէսն նախագահեց Պատրիարք Արքազան Հայրը:

Գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեղեցւոյ» եւ Հսկման կարգերուն հանդիսապետն էր Հոգշ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Զոքանեան:

Կիր. 30 Յուլիս.— Վարդապաւտ (Տօն Այլակերպութեան Տեառն): Ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան»: Հանդիսապետն էր Գեորգ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Օրուան

հանդիսաւոր Սուրբ Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պատարանան: «Հայր Մեր»-ն առաջ, Հոգշ. Տ. Բագրատ Արղ. Պուրճեմեան կարդաց Ն. Ս. Օծուրիւն Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին անդրանիկ կոմիտայի:

Բշ. 31 Յուլիս.— Յիշատակ Մեծեցոց: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մէջ պատարագեց Հոգշ. Տ. Ռաբէն վրդ. Յովակիմեան: Ապա կատարուեցաւ հաճատեան կարգ մնեցեցեալներու հոգիներուն համար: Հանդիսապետն էր Հոգշ. Տ. Ամուշաւան Ծ. վրդ. Ջոշանեան:

Դշ. 2 Օգոստ.— Աւագ Սեղանին վրայ իր անդրանիկ Սուրբ Պատարագը մատոյց Հոգշ. Տ. Էմանուէլ Արղ. Աբաջանեան:

Եշ. 3 Օգոստ.— Աւագ Սեղանին վրայ իր անդրանիկ Սուրբ Պատարագը մատոյց Հոգշ. Տ. Ընթանուէր Արղ. Բաբայանեան:

Ար. 4 Օգոստ.— Աւագ Սեղանին վրայ իր անդրանիկ Սուրբ Պատարագը մատոյց Հոգշ. Տ. Թեոդորոս Արղ. Զաքարեան:

— Նախատեսակին ի Ս. Յակոբ մախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գաբրիէան:

Եր. 5 Օգոստ.— Թաղէտի Առաքելոյն եւ Սանդիտոյ կուսին: Աւագ Սեղանին վրայ Սուրբ Պատարագը մատոյց մարմնծայ երեք Արեղաներուն ռասուդին ու վարժիչը՝ Հոգշ. Տ. Գուսան վրդ. Ալեանեան:

— Նոյն երեկոյին, Պատրիարք Սրբազան Հայրը Միաբանութեան 16 հոգեւորական անդամներուն եւ մարմնծայ արեղաներուն հետ ընթրիքի ռանցեալ բացօթեայ, Պատրիարքարանի պարտեզին մէջ:

Կիր. 6 Օգոստ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերամատարան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գաբրիէան: Ժամարարն էր Հոգշ. Գուսան վրդ. Ալեանեան:

Եր. 12 Օգոստ.— Արքեպիսկոպոս Եւ Թոռանց Արքեպիսկոպոս Երեմիայի Լուսաւորին մերոյ՝ Արեւստակիսի Վրդանիսի, Յուսկաննի, Գրիգորիսի եւ Դանիէլի:

Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադրի ժամարարն էր Հոգշ. Տ. Շնորհիք Ծ. վրդ. Գասպարեան, հոգեւոր հովիւ Ս. Շողակաթ եկեղեցիին, Ալեմք Լուսիկի մէջ:

Կիր. 13 Օգոստ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ ժամարարն էր Հոգշ. Տ. Աւետիս Արղ. Իփրանեան:

Պատրիարք Սրբազան Հայրը «Հայր Մեր»-ն առաջ մախագահեց «խաղողօրինէ»-ի

արարողութեան:

Բշ. 14 Օգոստ.— Այսօր սկսաւ Ս. Կոյսի Վերափոխման օրը կանխող հանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը՝ Գերսնմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ:

Եր. 19 Օգոստ.— Սփսխող Ս. Ժողովոյն (431): Սուրբ Պատարագը մատուցուեցաւ ի Սուրբ Աստուածածին: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սահակ Արղ. Մաշայեան:

Կիր. 20 Օգոստ.— Բարեկենդան Ս. Աստուածածնի Պահոց: Սուրբ Պատարագը մատուցուեցաւ ի Սուրբ Աստուածածին: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ վրդ. Պողոսեան:

Ար. 25 Օգոստ.— Նախատեսակը պաշտուեցաւ Սուրբ Եւրիանին. հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Եր. 26 Օգոստ.— Տօն Շողակաթի Ս. Եւրիանի: Սուրբ Պատարագը մատուցուեցաւ ի Սուրբ Եւրիանին: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ վրդ. Պողոսեան:

— Կեսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր իմնաշարժերով իջան Գերսնմանի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Սուրբ Աստուածածնայ Տաճար ուր պաշտուեցան ժամերգութիւն եւ մախատեսակ:

Գիշերակցիցքին, մոյն վայրին մէջ պաշտուեցան «Նկեսցէ»-ի եւ Հսկման ժամերգութիւնները: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Կիր. 27 Օգոստ.— Վերափոխումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Պատրիարք

Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր իմնաշարժերով իջան Գերսնմանի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Սուրբ Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Սուրբ Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Սուրբ Պատարագը մատոյց եւ քարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Պատարագիչ Սրբազանը մախագահեց «Աղայաստան»-ին:

— Կեսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեան մախատեսակին մախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Բշ. 28 Օգոստ.— Յիշատակ Մեծեցոց: Օրուան Սուրբ Պատարագը Ս. Գլխադրի մատարան մէջ մատոյց Հոգշ. Տ. Հայկազուն Ծ. վրդ. Մելիքեան: Հոգեհաճատեան կարգին մախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

ՊԼԵՏՈՆԱԿԱՆՐ

Ուր. 30 Յուլիս.— Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Լուսարարայեան Գերշ. Տ. Դանիէ Արք. Սահակեանի, Նիւստից Տեսուչ Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեանի, եւ Հոգշ. Տ. Աւետիս Արք. Իփրաքեանի (գաւազանակիր), առաւօտեան ժամը 11-ին Թէ Լիլիվէն թոնջի առին, Կիպրոսի վրայով մեկնելու համար Պէյրութ, մասնակցելու համար Մեծի Տանն Կիլիկիոյ ընտրեալ Կաթողիկոսի, Լիբանանի թեմի բազմամեայ Առաջնորդ, Գերշ. Տ. Սրաւ Արք. Քէշիշեանի, Հայրապետական օծման եւ գահակալութեան արարողութեանց, որոնք տեղի ունեցան, 1 Յուլիս, Շաբաթ օր, Ամբիլիասի Մայր Տաճարի շրջափակին մէջ:

Պատրիարք Սրբազան Հայրը եւ միաբանակից հոգեւորական հայրերը Ս. Աթոռ վերադարձան նոյն Յոսիսի, 6 Յուլիս, Հիմզաբքի կէս գիշերին: (Այս մասին Սիմոն յաջորդ թիւին մէջ տեղի մանրամասնութեամբ պիտի անդրադարձանք. ԽՄԲ.) Եր. 8 Յուլիս.— Սպանիոյ ընդհանուր հիւպատոսին մեկնումիւ առթիւ տրուած ընդունելութեան, ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

– Երեկոյեան, Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Սահակ Արք. Մաշալեանի եւ Տ. Դանիէլ Քահանայ Գարանեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի առեմնապետ Պր. Յակոբ Տէմիրեանի, այցելեց Լաթրոն, ուր Հ.Մ.Ը.Մ.ի սկստուները կազմակերպած էին իրենց ամառային տասնօրեայ քանակումը: Սկստուններու եւ գայլիկներու խաղերու եւ խմբային երգերու յայտագիրէն յետոյ, Պր. Յակոբ Տէմիրեան եւ Պատրիարք Սրբազան Հայրը քաջալերանքի խօսքեր ըրին, շնորհակալ կարեւորութիւնը քանակումի փորձառութեան եւ հայրենասիրական գզգզումներու զօրացման:

Նոյն օրը, առաւօտեան, Տ. Դանիէլ Քահանայ Գարանեան Լաթրոնի թրափիստ վանքի մատուռին մէջ Սուրբ Պատարագ մատուց, որուն մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի սկստունները:

Եշ. 13 Յուլիս.— Ֆրանսական Ազգային Տոմին առթիւ տրուած ընդունելութեան, ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը, Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեան եւ Գերշ. Տ. Յուսիկ Նպս. Պաղտսեան:

Ուր. 14 Յուլիս.— Ֆրանսական Ազգային Տոմին առթիւ տրուած ընդունելութեան Սր. Աննայի վանքին մէջ, ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

Եր. 15 Յուլիս.— Աւստրիա-արքայական համայնաժողովի դարմանատան քաջաման առթիւ տրուած ընդունելութեան, Նրուսաղէի Աւստրիական հիւրավանքին (Հասփիս) մէջ, ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը, Հոգշ. Տ. Կոստիաս Վրդ. Շէրպէճեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

Եշ. 20 Յուլիս.— Պերիվիական ազգային տոմի առթիւ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը, Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեան եւ Գերշ. Տ. Յուսիկ Նպս. Պաղտսեան:

Եր. 22 Յուլիս.— Երեկոյեան, Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Բագրատ Արք. Պարմէճեանի եւ Հ.Մ.Ի վարչութեան ատենակալ Պր. Յակոբ Շէօնմէլեանի, այցելեց Հ.Մ.Ի սկստուններու քանակումի վայրը Լաթրոն: Սկստուններու անունով Պերի Շէօնմէլեանի քարի գալուստի խօսքէն եւ քանակումի մասնակցողներու փորձառութիւններէն տմանց յիշատակումէն յետոյ, սկստունները յայտագիր մը ներկայացուցին, երգի, պարի եւ այլ մրցումներու:

Պատրիարք Սրբազան Հայրը, մատնանշեց կարեւորութիւնը քանակումի մէջ կազմակերպուած խումբով աղայի եւ կարգապահութեան, եւ իրար օգնութեան ծառայութիւններով գոհունակութիւն զգալուն:

Բշ. 24 Յուլիս.— Նրուսաղէի Սուրբ Յարութեան Տաճարի նոր զինուորական հրամանատար Նշանակուելուն առթիւ տրուած ընդունելութեան, ներկայ գտնուեցան Սուրբ Յարութեան Տաճարի Տեսուչ Գերշ. Տ. Վաղարշ Նպս. Խաչատուրեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

Եր. 29 Յուլիս.— Արեւիկեան Տան (Օրիէմք Հաւուսի) մէջ, Արաքներու եւ Հրեաներու միջեւ տեղի ունեցած խաղաղութեան ի նպաստաւ հաւաքոյթին ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Ջոշանեան:

Եշ. 3 Օգոստ.— Առաւօտեան ժամը 10:30-ին, երբէր հրիւարասարդներ Գերսեմէնիի Ս. Աստուա-ծածնայ Գերեզմանի Տաճարը կը մտնեն եւ կը փորձեն այնի հայկական խորանը: Տաճարին հերթապահութեան կարգը Յունաց ըլլալով, Յուն միաբանը կու գայ եւ կը մարէ կրակը: Երբէր հրիտասարդները խոյս կու տան առնելով իրենց հետ ճառ. Յունաց քանկալը: Արդէն, մասամբ այրուած էր խորանին ծածկոցը եւ «վերջին ընթրեսաց» գոգմոցը, եւ խորանի տախտակէ շինուած քիմ մէկ մասը սեցած էր: Սր. Աստուա-ծածնայ Տաճարի հայոց Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայրիկ

Վրդ. Գալսեան, ամմիջապէս կը ստուգէ իրողութիւնը եւ պատահածը կ'իմացնէ վաճառական իշխանութեան: Հայոց եւ Յունաց տնտեսներու բողոքները մերկայացուցեցան պատկան իշխանութեանց, պահանջելով յիսկատար հսկողութիւն եւ ապահովութիւն Սուրբ Տեղեաց:

Բշ. 7 Օգոստոս — Էյմ-Էլ Սուլթանի Աւագանին շրջափակին մէջ տեղի ունեցող Միջազգային Տոմարաւանդին քացման արարողութեան, մերկայ գտնուեցան Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Արեւմտեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան: Բացումը կատարեց զրօսաշրջիկութեան մատարար Ռզի Պարաւ, առընթերակից ունեմաղով Երուսաղէմի քաղաքապետ Ենուտ Օլմերթ եւ մայրիկին քաղաքապետ Թեոտի Գուլմէ:

Դշ. 16 Օգոստոս — Պոզնիա-Հերմոնկովիմայի աղետեայններուն մասին տեղի ունեցած դասախօսական համաժողովին, ուր արտայայտուեցան կրօնական համայնքներու՝ քրիստոնեայ, իսլամ, տիրիքի եւ հրեայ մերկայացուցիչներ, մատագահութեամբ Լատինաց Ամնմ. Պատրիարք՝ Տ. Մըշէլ Սապպահի, Նոթր Տամ Պանդոկին մէջ, մերկայ գտնուեցան Հոգշ. Տ. Անուշահան Մ. Վրդ. Ջորջեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Կիր. 21 Օգոստոս — Հայ ուխտաւորներու խումբ մը Ֆիլատելֆիայէն, իրենց հոգեւոր Հովիւին՝ Հոգշ. Տ. Հայկազուն Մ. Վրդ. Մելքոնեանի գլխաւորութեամբ ժամանեցին Երուսաղէմ եւ իջեւանեցան Նոթր Տամի պանդոկը:

Նոյն երեկոյ, միաբանութեան Հոգեւորական Հայրերուն հետ ընթրիչէ յետոյ, ժառանգաւոր սաներ համերգային յայտագիր մը մերկայացուցին ի պատիւ հիւրերուն, մատագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր: Ուխտաւորները իրենց կեցութեան շրջանին հանդիպումներ ունեցան Պատրիարք Սրբազան Հօր հետ, եւ այցելեցին բոլոր սրբատեղիները, եւ Եփայի Ս. Նիկողայոս վանքը: Վերափոխման յաջորդ օրը, Մոնտիցին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պատարագեց Հոգշ. Տ. Հայկազուն Մ. Վրդ. Մելքոնեան:

Ուխտաւորները 29 Օգոստոսին մեկնեցան դէպի Յունաստան եւ Ամերիկա: Կը մաղթենք որ, հայ ուխտաւորութիւնը աւելի յաճախակի դառնայ Երուսաղէմ, հաղորդակից դառնալու համար Սուրբ Յակոբեանց վանքի հոգեւոր ժառանգութեանց եւ պատմական դերին: